

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԵՐԴԻՄԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՑ
(XIX դարի 50—60-ական թվականներ)

Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Կ. Պոլսի «Մեղուն» (1856—1874), այնուհետև Հ. Պարոնյանի խմբագրած «Խոտորոն», «Լույս», «Միծաղ», «Խիկար» պարբերականները արևմտահայ երգիծական մամուլի առավել բովանդակալի և անգերազանցելի հրատարակություններ մնացին հայ մամուլի պատմության մեջ: Սակայն այդ պարբերականների հետ միաժամանակ արևմտահայ հանրային ու մշակութային կյանքում իրենց, թեկուզ և համեստ, դերն են ունեցել նաև այլ երգիծաթերթեր: Ունենալով իրենց ընթերցողները, դրանք նպաստել են ոչ միայն հասարակական կարգի քննադատմանը, այլև յուրովսան առաջ են մղել հայ երգիծական արվեստն ու հրապարակախոսության զարգացումը:

Արևմտահայ բոլոր երգիծաթերթերը, այդ թվում և Հ. Սրվաճյանի ու Հ. Պարոնյանի պարբերականները նմում էին Կ. Պոլսի և զավառների հայության բնութագրի ստեղծագործության ակունքներին: Դրանց բոլորին, իրենց որակական տարբերություններով հանդերձ, միավորում էր նույն՝ ժողովրդական տարրերային կրթիծանքը: Այս հանգամանքը առանձնապես կարևոր է այդ երգիծանքի բնույթը և առանձնահատուկ զարգացման ընթացքը հիասպարդություն տեսնելիս: Շատ ուշադրով է այն, որ երգիծանքը հաստատուն տեղ է ունեցել արևմտահայ մշակութային մեջ և փնտրվող ժանր կղերկարակա հրատարակություններում: Նախ, Մխիթարյանների հրատարակություններում (որոնց հիմնական ընթերցողը արևմտահայ հանրությունն էր), այնուհետև 1850—1860-ական թվականների Կ. Պոլսի և Չմյուռնիայի մամուլում կրթիծանքն ու հումորը դիտվում են որպես հասարակության հետաքրքրությունն ու ուշադրությունը արժանանալով միջոց, որով խոսքն ու գաղափարը դառնում են առավել տպավորիչ ու մնայուն:

Արևմտահայ առաջին երգիծական հանդեսը «Զվարճախոսն» է՝ «Ժաղրաբանական և բանասիրական շաբաթաթերթը» (Կ. Պոլս, 1855—1856), որը «Զվարճախոսի» ընկերության հրատարակությունն էր: Շաբաթաթերթը տպագրվել է երգիծական ստեղծագործություններ, առակներ, դրույցներ և այլն: Ունեցել է ծաղրանկարներ: Դադարել է ընկերության դրժունեության ավարտի հետ: Շաբաթաթերթի կարճատևությունը հիմք է տալիս ասելու, որ այն ոչ այնքան կարևոր է իբրև երգիծաթերթ, որքան առաջինը լինելով արևմտահայ մամուլի պատմության մեջ՝ ժանրային իմաստով:

«Զվարճախոսի» դադարի տարում Կ. Պոլսում սկսեց հրատարակվել Հ. Սրվաճյանի «Մեղուն»: Սակայն «Մեղուն» զուտ երգիծական հրատարակություն չի կարելի համարել: Ինքը՝ հանդեսն էլ այդ հավակնությունը չի ունեցել, որովհետև նրա ենթավերնագրում երգիծանքին հատկացված է վերջին տեղը («Հավաքածու բարոյական, բանասիրական, գրագիտական, տրետեսական, առևտրական և զվարճալի գիտելիաց»): Բայց այն հանգամանքը, որ «Մեղուն» երգիծանքը հաղթահարում է կենդանային զրույցի և անեկդոտի առօրեական շրջանակները, պարունակում է հասարակական սուր հարցադրումներ ու ընդհանրացումներ, ներթափանցված է սրամտության անսպառ պաշարով (որն իր հարստության համեմատ երգիծանքին տալիս է դրսևորման զարմանալի բազմազանություն), այդ երգիծանքը արդեն ստանում է որակական բարձր արժեք: Այս տեսակետից, «Մեղուն» բացառիկ կարևոր տեղ է զբաղում ժամանակի հայ երգիծաթերթերի մեջ:

Ասացինք, որ «Մեղվի» երգիծանքը ստեղծվում է ժողովրդական ստեղծագործությունից: Մեղվի երգիծանքը հրապարակվում է առանց հեղինակի անունի: Իրադարձություններին ու երևույթներին տված արագ արձագանքը հրապարակվում է օգտուհիների օգտին: Կենցաղային իրավիճակը, առավել ևս դրա թերությունները Սրվաճյանը ներկայացնում է պոլսահայ հասարակության մեջ այն-քան տարածված գտածո ու գնահատված զվարճապատում զրույցով, սրան հատուկ ժողովրդական խոսքով ու արտահայտչամեթոդով: Սակայն գործողությունն ու խոսքը Սրվաճյանի երգիծանքի մեջ միարժեք չեն: Խոսքն ակնդատորեն առաջնային է գործողության նկատմամբ, թեև նրա երգիծանքն իր ամբողջության մեջ անշարժ չէ: Ընդհակառակը, զրույցի թեման արագորեն ամրալվում է, ձեռք բերում նոր տարածքներ և կենդանի ու աշխույժ խոսք սրամտությունը ստեղծում է մեկը մյուսին հաջորդող գործողությունների պատրանք: Դրա շնորհիվ զավեշտական գործողությունը դառնում է ինչ-որ միշտ իր շափի մեջ գտնվող այդ նույն երգիծական խոսքի շնորհիվ:

«Մեղվի» երգիծանքի հատկանշական առանձնահատկությունը նրա հանրային ու քաղաքական բովանդակությունն է: Անդամ զուտ թվացյալ կենցաղային երգիծանքի (բարքեր, ընտանեկան հարաբերություններ, ավանդույթների ու սովորությունների անախրոնիզմ, անոտիապաշտություններ, կրոնամոլություն և այլն) գնահատման հարցում Սրվաճյանը ելնում է երևույթի կարևորությունից: Երբ «Մեղվի» ընթերցողներին մեկը կշտամբում էր նրան «չափազանց զվարճախոսություններով», «ազգակցաց վարմունքը ծաղրելու ու ծաղրաբանելու» համար, Սրվաճյանը անում է երկու շատ կարևոր առարկություն. երգիծանքը պետք է գնահատել նախ հանրային օգտակարության, և այնուհետև՝ մամուլի ազատախոսության տեսանկյունից:

Այս իմաստով կարելի է ասել, որ «Մեղվի» խմբագիրն առաջիններից մեկն էր, որ հայ մամուլում ստեղծեց երգիծական հրապարակախոսության ժանրը: Մինչև մեր ժամանակները հարատևող այս ուղղությունը ապացուցել է իր կենսունակությունը: Դեռ նրանով, որ դարձել է հրապարակախոսության մնայուն ժանրերից մեկը ազգային լրագրության մեջ: Արևմտահայերի Ազգային սահմանադրության, վարչական մարմինների, աշխարհիկ ու կղերական հետադիմության ու սուլթանական բռնությունների դեմ ուղղված «Մեղվի» երգիծանքը հետապնդում իր զարգացումը պետք է ստանալ: Զ. Պարոնյանի, Ի. Ոսկանի և այլոց հեղինակությունների շնորհիվ:

Զուտ գրական իմաստով ևս «Մեղուն» իր խոսքն ասուց ձևավորվող արևմտահայ արձակի ժանրում: Սրվաճյանի տպագրած ֆելիետոնները նախանշում են երգիծական պատմվածքի զարգացման միտումները: Երանյանի իմաստով դրանք շատ մոտ են երգիծական պատմվածքին, թեև դեռևս չունեն վերջինիս հատուկ գործողության հստակորեն առանձնացված սահմաններ: Դրանք ֆելիետոնից դեպի պատմվածք տանող անցումային փուլ են ներկայացնում:

Այնուհետև, իր մեկ արարով կատակերգություններով Սրվաճյանը նույն կերպ յուրջ խթաններ էր տալիս արևմտահայ կատակերգության ձևավորմանը: «Ժողովրդասին վաստակի միջոցները», «Մտացածին ձուլածեղ մը» և «Լուսնի փողոցը» կատակերգություններով «Մեղուն» նախապատրաստում էր ժանրի հետագա դրուկորումները, որոնք պետք է ի հայտ գային Զ. Պարոնյանի և մասամբ Մ. Մամուրյանի ստեղծագործություններում:

Մինչև իր հրատարակության ավարտը «Մեղուն» Զ. Սրվաճյանի, այնուհետև Զ. Պարոնյանի օրհանգրվումն էր արևմտահայերի առաջատար երգիծական հրատարակությունը: Սակայն այս ժամանակաշրջանում, նրա կողքին և համաժամանակ հրատարակվել են այլ երգիծաթերթեր, որոնք ուշագրավ են առհասարակ երգիծական մամուլի ամբողջական նկարագիրը վերահանելու տեսանկյունից:

1862 թ. Զմյուռնիայում հրատարակվում էր «Դիմակ» կիսամսյա երգիծական հանդեսը՝ Արամ Տետևյանի խմբագրությամբ։ Երգիծանքը «Դիմակի» միակ ժանրը չէր, այս հանդեսը տպագրել է նմուշներ եվրոպական գրականությունից, ազդային ու մշակութային կյանքի վերաբերյալ հոգովածներ և այլն։ «Դիմակի» Լրգիծական նյութերը հիմնականում զետեղված են նրա «Թերթ ավելցիկներով» բաժնում, որտեղ ծաղրի են ենթարկվում գմյուռնահայ կյանքի ինչ-ինչ կողմերը։ Պետք է ասել, որ այդ արվում է ալաբաշտի, անհայտ նախադասություններով։ Առհասարակ ալաբաշտությունը հետաքրքիր գուրդացում է ապրել արեմտահայ երգիծական մամուլում, որ հիմնականում բացատրվում է արևմտահայերի ազգային ու հանրային կյանքի, իսկ այնուհետև Թուրքիայի քաղաքական իրականության պայմաններով։ Մինչև 1860 թ. Ազգային սահմանադրությունը (և մասամբ դրա հետ էլ) Լրգիծական մամուլը խուսափել է ազգային հեղինակություններից Լրգիծելուց, ավանդական հասարակության հիերարխիկ սանդղդի վերին աստիճանները անհասանելի էին երգիծական սլաքներին։ Սահմանադրության հաստատումից հետո դրությունը բավական փոփոխվել էր հոգուտ երգիծանքի անմիջականության, որ ապացուցվում է «Մեղվի», այնուհետև «Թատրոնի», «Մամուլի» և «Լույսի» օրինակներով։ Երգիծանքն ուղղվում է որոշակի և ևրույթի կամ կոնկրետ անձի դեմ և այսպիսի ոչ միջնորդավորվածությունը անհամատեղելի է դառնում ալաբաշտությանն ու գրոտեսկին։ Չարիքի կրողը ընթերցողին է ներկայանում իր իրական նկարագրով և միջավայրում, որից Լրգիծանքը դառնում է նպատակասլաց ու անվրեպ։

Արդուլ Համիդի բռնակալության տարիներին Թուրքիայում երգիծաթերթերը, այդ թվում և արևմտահայ երգիծաթերթերը, ենթարկվեցին հալածանքների կամ հատուկ հսկողության և այս պայմաններում, 1880-ական թվականներին կենսին մեջտեղ պետք է դար արդեն բավականաչափ մոռացված հինը՝ տյարանությունը, որ տեղի մինչև Համիդի զահակալության վախճանը։ Այսպիսով, ալաբաշտական ձևից քանիցս բողոքում էր Հ. Պարոնյանը, նկատելով, որ այն սպանում է երգիծանքը։ «Խիկարի» իր հրապարակումներում՝ Լրգիծաբանը մեկ անգամ չէ, որ ամենայն խորությամբ վերլուծել է դրոտեսկի և ալաբաշտության վերացականությունը, ուրեմն և անզորությունը հասարակական շարիքի դեմ։

Վերը նշվածով հանդերձ, «Դիմակի» երգիծանքը երբեմն հասնում է քաղաքական սրության։ 1862 թ. Զեյթունի ինքնապաշտպանության օրերին հանդեսը տպագրեց «Արյունահեղ դերասանություն ի Զեյթուն» վերնագրով Լրգիծական թատերադրը², որտեղ ցույց էր տալիս արյունալի իրադարձությունների իսկական մեղավորներին՝ «Պրաքի մարդասպաններին», նկատի ունենալով Թուրքական մոլեռանգությունն ու բռնակալությունը։ Ասվածը առավել քան հասկանալի էր և նույնիսկ ալաբաշտության շնչին դողան չէր Դարող թողարկել դրա ուղղակի իմաստը։

Երգիծական մյուս պարբերականը «Հավերժահարսն» է, որ դարձյալ հրատարակվել է Զմյուռնիայում, 1862 թ.։ «Արվեստից, գիտությանց նորելուկի և ղվարճառիրույց» այս կիսամսյա խմբագրում էր Ս. Փափազյանը։ «Հավերժահարսը» ևս չհասցրեց որևէ նոր խոսք ասել երգիծանքի բնագավառում։ Երգիծանքը նրա էջերում գրավում է երկրորդական տեղ՝ ի հայտ գալով միայն «Զվարճալիքի»՝ զավեշտական համառոտ պատմությունների կամ հումորի բաժնում։ Այս հանդեսը առավել քան արժեք է ներկայացնում Շեքսպիրի «Վենետիկի վաճառականի» տպագրությամբ, որ բնագրից թարգմանել էր Ա. Կ. Տետևյանը և որը մնաց անավարտ՝ «Հավերժահարսի» հրատարակության դադարի պատճառով։ Հասարակականորեն ամենաազդեցիկ երգիծաթերթը այս ժամանակաշրջանում մնում էր «Մեղուն»։

1869 թ. բավական հաջողությամբ ասպարեզ մտավ մյուս երգիծաթերթը՝ Ա. Ավազյանի խմբագրած «Մամուլը» (1869—1882)։ Այն, ինչպես և

2 Դիմակ, 1862, № 3, էջ 23։

«Մեղուն», ամենևին չի ամփոփվել միայն երգիծանքի ասպարեզում, նրա զննարձակ տեսողաշարում են եղել արևմտահայ գյուղի ամենատարբեր կող-
 րնդարձակ տեսողաշարում են եղել արևմտահայ գյուղի ամենատարբեր կող-
 մերի լուրջ հրապարակախոսական հեռահեռախոսը, հանրային հարաբերու-
 թյունները, մշակութային կյանքի, դպրոցի, թատրոնի և գրականության հար-
 ցերը, նրանց հայաստանի կացունները, Խորհրդային քաղաքական իրադար-
 ձությունները և այլն: «Մեղվի» հետ միասին «Մամուլը» առաջիններից էր,
 որ արևմտահայ լրագրության ասպարեզում զարգացրեց ֆելիետոնի ժանրը:
 Դրանք երգիծական սրուկյուն ունեցող հրապարակախոսական հեռահեռախոսներ են,
 ուղղված այս կամ այս հանրային ու կենցաղային երևույթի կամ անօրինակ
 Առհասարակ, «Մամուլի» երգիծական նյութերում զղալի քանակ են կազմում
 կենցաղային զրույցները, բարքերն ու բարոյականությունը, միջին խավերի
 առաջին կյանքը պատկերող երգիծական պատմվածքները, պատմաներն ու
 մանրապատմաները, Հասարակ ժողովրդի պարզ ու խոսակցական լեզվով և
 հեղինակաշունչ հրամցվող այդ նյութերում «Մամուլը» ծաղրում էր
 պոստհայ կյանքի ծիծաղաշարժ կողմերը, հնացած ու ժամանակավեր պո-
 վոտիզմներն ու նորոգյալ լեզուներն հակումները: Սվ լեզվի, և շարադրանքի
 ստեղծագործական բնույթի տեսակետից այս նյութերը շատ մոտ են Հ. Սը-
 վաճյանի հեղինակած և «Մեղվի» էջերում դեռևս 1860-ականի սկզբներին
 տպագրված երգիծական զրույցներին: Դրանցում ևս հաճախ ամբողջ շարադ-
 րանքը, սյուժեն, կառուցված են զրույցի, երկխոսության վրա և առավել
 քան ակնհայտորեն նկատելի է խոսքի կոմիդիի առավելությունը գործողու-
 թյան կոմիդիի նկատմամբ: Ավելին, երկրորդը պարզապես միջոց է առաջինի՝
 ըստ ամենայնի զրույցում համար: Բնականորեն ևս այս երգիծաթերթերի հա-
 մար ընդհանուր են՝ կենցաղային պատկերներ, ամուսնություն, մոդայամուս-
 թյուն, քահանաների տգիտություն և ընչաքաղցություն, դպրոցական գործի
 ստվերոտ կողմեր և այլն: Իր տեսակի մեջ հաշտված երգիծական արժեք է
 ներկայացնում «Ամուսնական սխալմունք մը»՝ վերնագրով երգիծական
 պատմվածքը: Այստեղ «Մամուլի» երգիծաբանը մեկ ընդհանուր սյուժեի մեջ
 է միավորել մի քանի բնմաներ՝ երկաթաբեկիկների աղահուլությունը, ամուսնու-
 թյունը և անտրի վերածելը, կեղծ պսակ կատարող քահանաների երգիծումը
 և այլն:

«Մամուլը» ուղարկություն է դարձրել ընկերությունների գործունեության
 արատաշար կողմերի վրա՝ արկածախնդիրների և դրամաշուքիների համար
 այդ ընկերությունները դառնում են շահարկումների առարկա: Այսպես է ծա-
 նակվում Գրում Գալուսի «Հայկական ընկերությունը», («Երկար հաշիվ մը»)՝
 որը երբեք հաշվետվություն չի եղել հասարակությանը:

«Մամուլի» ֆելիետոններում հաճախակի է նրանում երգիծական պերսո-
 նա՝ Մեփիստոֆելը, հար և նման Մեղուխեչային, որը Հ. Սըվաճյանի մշտա-
 կան հերոսն էր և ոչ քիչ դեպքերում՝ նրա անձնավորումը: Մեփիստոֆելը ևս
 իր ամենուրեք զգացել աշխարհի ներկայությունը սկսում և զարգացնում է դրույ-
 ցը, ինչպես նաև գործողությունը և կամ միջամտում է դրանց՝ իրողություն-
 ներին տալով իր սեփական գնահատականը, որ, անշուշտ, նաև «Մամուլի»
 գնահատականն է: Իրենց սրամտությամբ և մասնավորապես, հասարակա-
 կան հիշողությամբ «Մամուլի» ֆելիետոնները վիջում են «Մեղվի» նույն ժան-
 րի գործերին, ինչպես Մեփիստոֆելը իր սրամտությամբ՝ Մեղուխեչային: Կա-
 րևորը, սակայն, այն է, որ Սըվաճյանի «Մեղուն» ստեղծել էր երգիծանքի մի
 յուրահատուկ դպրոց, որի հետևորդն էր «Մամուլը» (զուտ դրական մշակման
 իմաստով, որովհետև չի բացառվում, որ երգիծական պերսոնաժն առհաստ-
 ատ իր ծագումն առնե ժողովրդական ստեղծագործությունից): Ի դեպ,
 1870-ական թթ. արևմտահայ այլ երգիծաթերթեր ճիշտ նույն կերպ, ստեղ-
 ծել էին իրենց սեփական երգիծական հերոսին, որին կանգնադառնալ իր
 տեղում:

⁸ Մամուլ, 1871, № 159, էջ 18—19:

⁴ Նույն տեղում, № 161, էջ 36—37:

Այժմ մի քանի խոսք «Մամուլի» երգիծաբան հեղինակի կամ հեղինակների մասին: Հ. Պարոնյանի, Ա. Արփիարյանի և այլոց պաշտոններով «Մամուլի» երգիծական նյութերը դրում էր ոչ թե նրա խմբագիր Գ. Այվազյանը, այլ՝ իր կողմից վճարվող գրողները: Հիշելով, «Մամուլի» նյութերը հիմնականում անստորագիր ևս և այս հանգամանքը, թվում է, խոսում է հիշյալ պլան-դումների օգտին: Մյուս կողմից՝ Գ. Այվազյանի, որպես երգիծաբանի մասին լուրս ևն նրան ժամանակակից հրապարակախոսներն ու գրողները (իրոպե ևս) նշված բացասական դատողությունները), ինչպես և հետագայի դրածիչները: Լեւոն, Գ. Այվազյանին անտեսելու մեջ իր նշանակությունն է ունեցել սրա շարունակական բանավեճը Հ. Պարոնյանի հետ, որի ընթացքում հայ երգիծանքի անգերադանցելի վարպետի սպանիչ ծաղրը կարող էր կործանարար ազդեցություն թողնել Գ. Այվազյանի՝ որպես երգիծաբանի հասարակական ճանաչման վրա: Այսպես թե այնպես, եթե մի կողմ թողնենք հեղինակային ինքնությունը, որ առանձին ուսումնասիրության նյութ է, «Մամուլը» զգալի դեր է կատարել հայ երգիծաբանների կայացման գործում և առաջ է մղել երգիծական արվեստը:

Նկատենք, որ իր մոտքով «Մամուլը» պետք է որ հուսադրեր առաջադրական հրապարակախոսներին: Գ. Այվազյանի պարբերականը ողջունեց Մ. Խրիմյանի «Կատրիս» ընտրվելը՝ ծանակելով նրա իշխանատենչ հակառակորդներին և սահմանափակալից այն շրջաններին, որոնք դժգոհ էին նոր «Կատրիս» ընտրությունից: Երգիծաբանները անհաշտ դիրք գրավեց հայ էֆենսիսական դասի հանդեպ՝ նոր գծեր հայտնաբերելով նրա աշխարհայացող նկարագրի մեջ: «Հայ էֆենսիսներուն ժողովը» երգիծական բանաստեղծություն մեջ ուրվագծվում է թուրքական հայադուր պաշտոնյաների կացության և ձգտումների արատաւոր խթանիչը:

— Էհ, աղքատ իմ ինչ հոգ, խեղճ եմ անիծեր,
Գոչեց խոշոր ֆես մը, շարժեց հունքեր,
Մենք սուաջ երթանք, շահինք բյուրպաներ
Գրպան լեցընենք կարմրուկ ոսկիներ:

Երգիծաբանների համարձակախոսությունը, որ նա ի հայտ բերեց իր առաջին համարներից, չէր կարող դուր գալ թուրքական իշխանությունների հովանավորություն վայելող տեղական ջոջերին: Առիթը չուշուցավ. Մկրտչարիս. խաչ եկեղեցում տեղի ունեցած դպրոցական հանդեսը երգիծելու համար «Մամուլը» խափանվեց, իսկ նրա խմբագիրը դատապարտվեց մեկ ամսվա բանտարկության: «Մամուլը» արդարամիտ դիրք էր գրավել հասունյան-հակահասունյան պայքարի ընթացքում՝ սուր հարձակումներ գործելով Հասունյանի և նրա կամակատարների դեմ: Այս թեմայով (նաև այլ թեմաներով) Այվազյանը տպագրել է հայատառ թուրքերեն բազմաթիվ հոդվածներ՝ անկներևաբար, իր հայերեն չխոսող կաթոլիկ ընթերցողներին նկատի ունենալով, և դատելով ըստ ամենայնի, նա բավական մոտ է կանգնած եղել հակահասունյան շրջաններին: Երգիծական սրությամբ է օժտված Հասունյանի կարծեցյալ նամակը կարդինալ Անտոնելլին, որը երգիծական ինքնամեղկացման հաջողված օրինակ է («Գերապատիվ Հասունի պատասխանը» վերնագրով):

«Մամուլի»՝ 1870-ական. թվականների սկզբներին որդեգրած հասարակական դիրքորոշման համար բնութագրական է նրա համարձակ կեցվածքը գավառական հարստահարությունների մերկացման գործում: «Վանա ազատ հրացանակիրները» առաջնորդողում ծանակվում են Վանի շրջանի քուրդ և թուրք հարստահարիչները, ինչպես և ազգային իշխանությունները, իրենց

5 Նույն տեղում, № 180, էջ 191:

6 Նույն տեղում, 1869, № 35, էջ 275—280:

7 Նույն տեղում, 1871, № 180, էջ 188—190:

հետ, բանավեճ, որի երկուստեք ծայրահեղությունը ընդգծվում էր իր տևականությամբ: Հետագայում ևս այս բանավեճը բավական տխուր հետևանքների ունեցավ «Մամուլի» և Գ. Այվաղյանի համար. Պարոնյանի կտրուկ որակումները, հավանաբար, պատճառ դարձան այն բանի համար, որ «Մամուլը» դուրս մնա ուսումնասիրողների ուշադրությունից, և կամ էլ, լավագույն դեպքում, իր խմբագրի հետ միասին արժանանա քամահրական որակումների¹³: Մինչդեռ, այդ ընդհարումները սկիզբ էին առնում ոչ թե Պարոնյանի ու Այվաղյանի փոխադարձ ատելությունից (թեև այստեղ կարող էր հարկադրաբար նաև անձնական վերաբերմունքը), այլ իրադարձությունները հնարահանելու որոշակի տարբերություններից (ընդհանրությունները, որոնք ևս քիչ չէին, այստեղ մղվում էին հետին շարք): 2. Պարոնյանը չէր կարող հանդուրժել Գ. Այվաղյանի վաղանցուկ համակրանքը պատրիարք Մ. Խրիմյանի հետ: Դա ևս, համակրանք, որ փոխվեց թշնամական քննադատության: Պատահական չէ, որ պատրիարքի հանդեպ իր դիրքորոշումը փոխելու հետքեր միայն մասնակ Այվաղյանը սկսում է իր հարձակումները «Մեղմի» վրա (1872 թ. փետրվար-մարտ): Սակայն 1872—1873 թթ. ընթացքում «Մամուլը» հիմնավորապես անհիմն հարձակումների մշտական թիրախ դարձրեց Մ. Խրիմյանին՝ վերջնականապես անցնելով նրա հակառակորդ քաղաքական ժողովի բանակը:

Բանավեճի մյուս պատճառը սլեյք է համարել, ինչպես արդեն նշել են ուսումնասիրողները, 2. Վարդուկյանի քննադատությունը «Մամուլում»: 2. Պարոնյանը, մինչդեռ, պաշտպանում էր այդ թատերական նշանավոր գործչին և նրա թատրոնը: Նույն շերտ, Պարոնյանը քննադատական նյութեր է տպագրել Տ. Զուխաճյանի դեմ, որին, իր հերթին, ամեն կերպ խրախուսում էր «Մամուլը» և հավանաբար, խոսքը այստեղ վերաբերում է այս գործիչների մերցակցությանը, ինչպես նկատել են ուսումնասիրողները: Հայ արվեստի այս երկու խոշոր գործիչների շուրջ մղվող պայքարի կիրքը հաճախ բանավեճողների հասցնում էր կողմնակալ և միակողմանի քննադատումների (Գ. Այվաղյանը՝ 2. Վարդուկյանի, իսկ 2. Պարոնյանը՝ Տ. Զուխաճյանի վերաբերմամբ), որ ավելի էր խորացնում բանավեճողների փոխադարձ հակակրանքը: 1873 թ. վերջին «Մամուլում» 2. Պարոնյանի դեմ ուղղված հարձակումներին միացավ երգիծարան 2. Համյանը, որի միջամտության մեջ ամենևին էլ երկրորդական դեր չէին կատարել 2. Պարոնյանի՝ իբրև երգիծարանի ունեցած մեծ հռչակն ու ժողովրդականությունը: Իր պատասխանի մեջ 2. Պարոնյանը տպավորիչ հարվածներ հասցրեց սրան, նշելով, որ Համյանը զգալաբար ևս համարվում է «Մեղմի» խմբագիրը, — որ մեզմե ետքը «Ծիրառա» խմբագրությունը ստանձնեց և քանի մը թերթ հայհուդությամբ լեղնելով «Ծիրառա» արտոնատերը թերթն առավ ձեռքին, հայտարարելով, թե Համյան Հակոբին հրատարակած թերթերը քաժանորդագրություն են դուրս պիտի համարվին¹⁴:

2. Պարոնյանը բավական երկար ժամանակ սլեյք է գործի դնել իր սուր ծաղրը՝ Գ. Այվաղյանին լռեցնելու համար. ի դեպ, կողմերը միմյանց դեմ գործի դրեցին նաև ծաղրանկարներ, երգիծական ժանրի այլևայլ տեսակներ: Բանավեճից առավել, սակայն, մեր օրերի համար կարևոր են այն կենսագրական տեղեկությունները, որ տալիս է Պարոնյանի մասին «Մամուլը»¹⁵: Այստեղ կարևորվում են փաստերը և ոչ թե դրանց տված՝ Այվաղյանի մեկնաբանությունները: Նկատենք նաև, որ Պարոնյանը կարողացավ դուրս գալ զուտ որակումների սահմաններից և ցուցադրեց Այվաղյանի կեցվածքի ցահախնդրական կողմերը՝ մեծահարուստներ 2. Կյոչեյանի և 2. Տատյանի ձայ-

13 Գ. Ստեփանյան, Հակոբ Պարոնյան, Երևան, 1964, էջ 49—50, 2. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1972, էջ 459, 488—489 և այլն:

14 Մեղմի, 5. XII. 1873:

15 Մամուլ, 1872, № 247, էջ 326—327, № 249, էջ 339—341, № 250, էջ 349—350 և այլն:

նափող դառնալը, բացահայտ կողմնակալության և անսկզբունքայնության դրսևորումները¹⁶:

Հետագայում ավելի էին ընդգծվում «Մամուլի» և Հ. Պարոնյանի հասարակական ըմբռնումների տարբերությունները, ձիշտ քննադատության ենթարկելով պատրիարք Ն. Վարժապետյանին՝ 1877—1878 թթ. ռուս-թուրքա-կան պատերազմի սկզբին հակառուսական, ոչ հեռատես կեցվածք ընդունելու հասար, Այվազյանը, սակայն, որչեզոք ընդգծված ժխտական դիրքորոշում Հայկական հարցի միջադպրանցման դեմ: «Հայոց պատրիարքը,—գրում չում Վարժապետյանը,—առաջին անգամ քաղաքականությունը թողնում էր քաղաքականության մեջ հետևելով զանկարելին կարելի բնելու փորձ փորձած կրկնում¹⁷: Այս պահպանողական մտայնությանը համապատասխան, «Մամուլի» երգիծանքը ստանում է որոշակի քաղաքական երանգավորում: Երգիծանքը ծաղրածանակի ենթարկեց Բեռլինի կոնգրես մեկնած հայ պատվիրակներին, Մ. Զեյնալի և Ք. Ինչ շահեցանք Պերլինի վերադարձին» գրքույկը և, առհասարակ, ինքնավարության նպատակը: Պատերազմի ընթացքում և ավարտին հայերի գաղթը Ռուսաստան՝ «Մամուլը» համարում է հենց այդպիսի՝ ձախող քաղաքականության ու ձգտումների հետևանք: Ձիշտ նույնպիսի վերաբերմունք ունեին Հայկական հարցի նկատմամբ Կ. Փանոսյանը և Մ. Մամուրյանը, առհասարակ հայ պահպանողականությունը՝ Բեռլինի կոնգրեսի ժամանակից ի վեր:

Հայկական հարցի վերաբերյալ «Մամուլի» ժխտական վերաբերմունքը, սակայն, չէր նշանակում, թե նրան չէին հուզում քաղաքական խնդիրները: 1882 թ. «Մամուլը» ակնհայտորեն ցուցադրեց իր հետաքրքրությունը արևմտա-արևելյան զգալի քաղաքական շարժումների հանդեպ: Հազիվ թե պատահական լինի այն, որ Այվազյանը տպագրեց Կյուրինում գտնվող քաղաքական կալանավոր Մ. Բալայանցի ծանր դրության մասին նամակներ, այնուհետև օգնեց նրան՝ գտնելու առաջիկա դատավարության համար փաստաթան¹⁸, նույն թվականի հեկտեմբերի 23-ին «Մամուլը» տպագրեց նույն Կյուրինի «Նուստալիզմի» ընկերության տասներորդ տարեգարծի առթիվ պատանի Մ. Զեյնալի չափածո ուղերձը, որի համարձակ տողերը սալեռիկ տաղնապ պատճառեցին թուրքական իշխանություններին, մանավանդ, բացահայտվել էր «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության գործը: Արդեն այդքանը բավականաչափ շատ էր թուրքական իշխանություններին համար՝ Այվազյանին բանտ նետելու և ցմահ աքսորի դատապարտելու: «Մամուլը» ընդմիջող դադարեց: «Արշալույս Արարատյանի» վերջին խմբագիր Հ. Սրվաճյանի հետ միասին Գ. Այվազյանն էր, որ դարձավ թուրքահայ ոստիկանական դրամաշնորհյալ առավել ողբերգական դոճը անցյալ դարի 80-ական թվականներին:

Անկախ Հ. Պարոնյանի հետ ունեցած հարաբերություններից ու հասարակական ու գրական հայացքների տարբերություններից, «Մամուլը» «Մեղվի» և այնուհետև «Թատրոնի» հետ միասին արևմտահայ հեղինակավոր երգիծական հրատարակություն էր: Արևմտահայ երգիծանքի զարգացման ընթացքը անհնարին է առանց «Մամուլի» համապատասխան նյութերի ուսումնասիրության: Դա վերաբերում է ոչ միայն հրապարակախոսական պատումին, պատմվածքին, կարճ հուամորին ու դավեշտական դատողություններին, այլև բուն երգիծանքի արվեստին, նյութի մատուցման եղանակին: Պակաս կարևոր չէ և այն, որ «Մամուլը» խթանեց հայ ծաղրանկարչական արվեստը նրա էջերում տպագրվել են սրամտությամբ ու կատարման նրբությամբ աչքի ընկնող շատ ծաղրանկարներ: Եվ դարձյալ, անկախ այն բանից, արդյոք Այվազյանն է «Մամուլի» երգիծական նյութերի հեղինակը թե ոչ, անվիճելի է թվում այն, որ այդ պարբերականի ֆեյխտոնների, պատումների ու երգիծական զրույցների ձևը, իրոք, շատ կողմերով հիշեցնում է Հ. Սրվաճյանի

16 Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 312—313, 342—343:

17 Մամուլ, 1878, № 610, էջ 126:

18 Նույն տեղում, 1882, № 969, էջ 260—263, № 970, էջ 274:

երգիծական ոճը, Ավիլի շուտ, և Սըվաճյանի, և «Մամուլի» երգիծանքը գլխավորապես հենվում է ժողովրդական երգիծանքի ու սրամտության տարրերի վրա։ Այն հանդես է դալիս իբրև մշակված երգիծանք՝ ժողովրդական խոսքի ու լեզվամտածողության ակնհայտ դրսևորումներով, կրում դրանց ազդեցություն խոր կնիքը։ Պարոնյանը, մինչդեռ, հայ երգիծանքը հասցրեց դասականության աստիճանի և այն գնահատելու համար, թերևս, այստեղ բավական կլինեին ասել, որ անհրաժեշտ են երգիծանքի բնութագրման միջազգային չափանիշներ, Ամենաբնութանուր իմաստով սա է Պարոնյանի «Մեղվի» ու «Թատրոնի» և, մյուս կողմից, Դ. Այվազյանի «Մամուլի» երգիծանքի հիմնական տարբերությունը։

1870-ական թվականների արևմտահայ երգիծաթերթերի շարքը լրացրեց «Միմոս» կոթորյան (Կ. Պոլիս, 1875—1876), Ա. Սաֆայանի արտոնատիրությունը և Հ. Հաճյանի խմբագրությամբ 1877 թ. նոյեմբերի 26-ից հետո Հ. Հաճյանը ընդհարվում է Ա. Սաֆայանի հետ, ինչը երևում է նաև Հ. Պարոնյանի՝ վերոբերյալ մեր մեջբերումից, և հետևում խմբագրությունից։ Դրանից հետո որպես արտոնատեր և խմբագիր ստորագրել է Ա. Սաֆայանը։ Հետագայում «Միմոսի» խմբագրության մեջ էական դեր է կատարում Նիկողոս Պեղիբեյանը։ Ա. Սաֆայանը գրում էր, որ նա «հրկար ատենեի ի վեր մեր թերթին խմբագրությունը հանձն առած ըլլալով՝ յուր ընտիր և զվարճախոս հոգվածներով արդիվ ընթերցողաց դահլանակությանցը արժանացուց զմեզ և ըստ յուր խոստման, կհամարձակեմք հասարակությանը իմաց տալ, որ ինչպիսի ասէի առաջ, նույնպես ասէի վերջը թերթիս տնօրինությունը և խմբագրությունը ինքը հանձն առած է»¹⁹։

«Միմոսի» նյութերը հավասարաչափ տպագրվել են հայերեն և հայատառ թուրքերեն։ Ավիլին, միևնույն երգիծական նյութը (գրույց, ֆելիետոն) երբևից կրկնով չափ զրված է հայերեն, կիսով չափ՝ հայատառ թուրքերեն, որ վկայում է «Միմոսի» երկվեզու ընթերցողի զգալի թվաքանակի մասին։

Հասարակական բովանդակության և ազդեցության իմաստով, «Միմոսը» չէր կարող մրցել ոչ «Մամուլի», և ոչ էլ, առավել ևս՝ «Թատրոնի» կամ «Մեղվի» հետ։ Այս հրատարակությունը շատ քիչ էր անցնում կենցաղային երգիծանքի սահմաններից և հիմնականում նպատակ ուներ զվարճալի պատմություններով ու դրույցներով լցնել ընթերցողի պարտալի ժամանակը։ Դասելով բոտ ամենալի, «Միմոսը» հիվանդագին է զդադել մրցակից թերթերի դիրադոնիստությունն իր նկատմամբ և փորձել է ծաղրով արտահայտվել «Մամուլի» և «Թատրոնի» մասին։ Իրականում այդ ծաղրը չի կարելի արվեստ համարել։ Հ. Պարոնյանի դեմ դրած մի հոգվածի («Հայոց Տելի Ճորճին» վերնագրով)²⁰ պարզունակությունը արդարացվում է նրանով, որ հոգվածում անպատշաճ որակումները շփոթում են սրամտության հետ։ Հ. Պարոնյանին «Միմոսը» հակառակորդ էր համարում նաև Հ. Վաթուկյանի հետ նրա բարեկամությունն առնչությամբ²¹։ Այս իրողությունը այսօր ամենաբավարար է նրանով, որ «Միմոսը» ներկայանում է որպես ժամանակի սահմանափակ բնագրերի մեկը, որ 1875 թ. թատերախոսականներ է տպագրել Տ. Չուխաճյանի «Քյոսա քյուհյա» օպերետի մասին։ Մասնագետներին այսօր կարող են հետաքրքրել «Միմոսի» ուղադրով նյութերը ժամանակի պոլսահայ թատրոնի ու թատերական գործիչների վերաբերյալ։

«Միմոսում» ես դգալիորեն դերակշռում է երգիծական գրույցը, որտեղ բացակայում է գործողությունը, շարժումը և ըստ այդմ էլ՝ գործողության զավեղականությունը։

«Միմոսը» չափավոր և պահպանողական պատրեոսիան էր և ոչ ոչ է պատճառը, որ նրա ելույթները հասարակական ստեղծուն չունեն։ Հալ ժողովրդին նա համարում է երդնական ազգ և չի հանդուրժում ոռնէ սկըզ-

¹⁹ Միմոս, 1876, № 52, էջ 410։

²⁰ Նույն տեղում, 1875, № 20, էջ 157—158։

²¹ Նույն տեղում, 1875, № 2, էջ 90, № 14, էջ 110—111։

բունքային քննադատությունն եկեղեցու և կրօնի նկատմամբ: Նրգրծաթիւրժը հարծակվում էր Կ. Փանոսյանի վրա գուա ալն յաւտճւոռոյ, ու նա, իսո. խոսել էր «սուրբ պատարագի խորհուրդների դեմ», ուստի կրօնական ժողովի ուղադրությունն էր հրավիրում «Մանգումնի էֆէքյարի» մեղսավոր խմբադրի վրա, որո իբր, իս գրուվ կրոնը խաղալիք էր դարձրել²²:

«Միմոսը» թերահավատությանը էր լցված ալգային սահմանադրության նկատմամբ՝ նրա անգործունակության ապացույցը համարելով հայ գովառի իրավազուրկ և անտերունչ վիճակը: Երգիծաթերթը այդ վիճակի բարեկամումը կապում էր ազգային խելամիտ լուսավորական գործունեության, մասնավորապես ընկերությունների գործունեության հետ: Պատրիարքարանի և ազգային ժողովի ջանքերը սա համարում էր թերի և անկատար: Այստեղից նրա բացասական վերաբերմունքը նախկին պատրիարք Մ. Խրիմյանի հանդեպ, որի կուսակից պարբերականները՝ «Թատրոն», «Մասիս» և «Մանգուդեպ», որի կուսակից պարբերականները՝ Միաժամանակ, «Միմոսը» չէր հարում նաև վերջիններիս հակառակորդ «Ղալաթիո օճախի» անդառնոր Ստ. Փափազյանին և Բր. Ղազարոսյանին, նկատելով, որ սրանք «հոլովակի ջահ ի ձեռին գավառոց մեջ պառակտություն սերմանելու կղբադին»²³: Ինքը՝ «Միմոսը» «ձախակողմյաններից» և «աջակողմյաններից» անկախ դիրք ունենալու հավակնությունը կարող էր ունենալ միայն մի երրորդ՝ զորեղ ուժի հովանավորությունը վայելելու պայմաններում: Նկատի ունենք ժամանակի ազգային գործիչ, ազգային և թուրքական իշխանավոր շրջաններում հեղինակություն ունեցող Հ. Տատյանին, որը, ի դեպ, Հ. Պարոնյանի գործուն հակառակորդն էր 1870-ական թվականներին: Հայտնի է Հ. Պարոնյանի տեղական ու սկզբունքային պայքարը այս անձնավորության դեմ, ինչպես և այն, որ մի հայտնի շափով և Գ. Այվազյանի «Մամուլը», և Ա. Սաֆայանի «Միմոսը» ահեղ երգիծաբանի դեմ գրիչ բարձրացնելիս առատորեն օգտվում էին Հ. Տատյանի տրամադրած մեղանից: Հերավի, երբ «Միմոսը» խափանվեց 1875 թ. հեկտեմբերի 20-ից մինչև 1876 թ. հունվարի 14-ը, ընդամենը 25 օր, թեև պատժված էր երկու ամսով, ապա հետևում ունեն Ա. Տատյանի և սրա մտերիմ, տպագրական վերատեսուչ Սայիտ պեյի միջնորդությունը²⁴:

«Միմոսը» երբեք դուրս չեկավ թուրքական քաղաքական կյանքին անմոռնչ հպատակվելու շրջանակներից: Առհասարակ, նրա երգիծանքը զուրկ է քաղաքական ամեն մի հնչեղությունից: Այսպիսի խոհեմությունից նա հրաժարվում էր բացառիկ դեպքերում, եթե, իհարկե, խոսքը Օսմանյան Թուրքիային չէր վերաբերում: Այս առումով ուղադրվ է «Լույսից» նրա արտատպած մի հոդվածը, որտեղ խոսվում է Ալեքսանդրապոլում Արսեն Կիրիտյանի ձեռնարկած ազգային-քաղաքական գործունեության, նրա ազգասիրական ու հայրենասիրական նպատակների և մատուցյալ ծերբակալվելու մասին²⁵: Ինչ-որ շափով «Միմոսը» իր ձանձրացած ընթերցողին փորձում էր հրահրել սահմանից այն կողմ գտնվող ազգային խմորումների իրողությամբ:

«Միմոսի» երգիծական նյութերը զրված են պոլսահայ բախառով և եթե առանձնապես չեն փայլում իրենց աբիստով, ապա որոշակի հետաքրքրություն են ներկայացնում պոլսահայերի կենցաղի, ժողովրդական հումորի և առհասարակ երգիծանքի օրինակների տեսակետից: Առևտրահա երգիծանքի ժանրի առանձնահատկությունները վերհանելիս մանավանդ, զգալի է դառնում «Միմոսի» դերը: Շատ ուղադրում են նրա ֆելիետոններում գիրպրնդիսառն մատուցվող իրականի թանձր գծերը և երգիծանքի անորոշությունն ու վերադասականությունը:

Երգիծական արվեստի մոտավորապես նույն մակարդակին էր «Շառիվառի արևելյան» երգիծաթերթը: Այն հրատարակվում էր Կ. Պոլսում, 1876 թ.

²² Նույն տեղում, 1876, № 44, էջ 345—346:

²³ Նույն տեղում, 1875, № 21, էջ 162:

²⁴ Նույն տեղում, 1876, № 35, էջ 273:

²⁵ Նույն տեղում, 1875, № 6, էջ 45—46:

«Միմոսից» մեկ արդեն հայտնի է. Հաճյանի տնօրինությամբ և խմբագրությամբ «Շառիվադին» հրատարակվել է հայերենով և հայատառ թուրքերենով, ընդ որում, «Ջավիշտական» խորագրի ներքո տպագրվում էին բացառապես հայատառ թուրքերենով նյութեր: «Շառիվադին» շոշափում է Կ. Պոլսի երգիծական մամուլից արդեն հայտնի կենցաղային թեմատիկան, երկխոսություն-ֆելիետոնների ձևը, հետամնաց բարքերի ու ընտանեկան ավանդույթների հրդեհածանցի հիմնական ժանրը: «Շառիվադին», ինչպես և «Մեղուն» ու «Մամուլը», ունի իր մշտական պերսոնաժը՝ Դե Նիկոն («սանդարամետաց բարձրագույն կարգի աշակերտներեն»), որն իր կրտսեր եղբայր «Պիծակի» հետ մեր քով ծառայելու պաշտոնը ստանձնած կերպար է, ինչպես հայտնում է երգիծաթերթը²⁶, Նիկոն ստորագրել է հայերեն ֆելիետոնների, կենցաղային բնույթի հումորի և այլ նյութերի ներքո, որտեղ կան ոչ միայն խոսքի, այլև գործողության կոմիդիի հաջողված օրինակներ: Հավանաբար, հայատառ թուրքերեն և հայերեն երգիծական նյութերի հեղինակը Հ. Հաճյանն է, որը հավասարաչափ տիրապետում էր երկու լեզուներին: Հայերեն խորագրի տակ տպագրելով հայատառ թուրքերեն նյութեր, Հ. Հաճյանը արել է և հակառակը՝ հայատառ թուրքերեն խորագրի ներքո: Այսպիսին է, օրինակ, «Ծահիլ իլի շրջմա յուլա» («Երիտասարդի հետ ճանապարհ մի ընկիր») թուրքերեն վերնագիրը կրող հայերեն ֆելիետոնը²⁷, Մյուս երգիծաթերթերի նման «Շառիվադին» ևս գերազանցապես նյութերը շարադրում է Կ. Պոլսի բարբառով՝ սրան հատուկ թուրքերենի առատ գործածությամբ: Այս ֆելիետոնները իրենց հիմքում ունեն իրական դեմքեր ու դեպքեր: Ոչ քիչ դեպքերում ֆելիետոնների նյութը այնքան ճշմարտապատում էր լինում, որ պոլսահայերը մասնավորեցնում էին դրանք՝ տեսնելով իրենց սեփական դեմքը, որոնք էլ շարադրանքի մեջ բաղադրված որոշակիությունը: Այսպես, «Թրախումա»²⁸ («Օժիտ») վերնագրով երգիծական զրույցում ծաղրի է ենթարկվում անպայման օժիտով ամուսնանալու շահառիտական սովորույթը, որը հաճախ այն հետևանքն էր ունենում, որ երիտասարդները դառնում էին այդ նույն օժիտի տիրուհու՝ իրենց կնոջ կամակատարը: Նշված ֆելիետոնի տպագրությունից շատ կարճ ժամանակ անց երգիծաթերթը տպագրել է ոմն Տ. Փափազյանի նամակը, որտեղ վերջինս խնդրում է «Շառիվադին» խմբագրին՝ հրապարակով ժխտել, որ ինքը՝ Տ. Փափազյանն է այդ զրույցի հեղինակը, որովհետև «իբր հեղինակ կգրպարտեն ղմեզ... սաստիկ ուղիղությամբ ուղարկվում էին»²⁹, նույն կերպ, «Միմոսը» 1875 թ. Հանքո Պալյանի մահախոսականում գրել էր, որ ի տարբերություն Նվրդայի և Ամեհիկալի. որտեղ ըստ արժանվույնի հն ահա-հատվում էինք ու տաղանքը, հոս (Կ. Պոլսում—Ա.Խ.) ոնչպե՜տ մո կողոպտուով միլիոնի տեր կլոյա, պատվո և փառառ հհասնի, և հանձար անոր պիոժ ոտոսերուն տակ կկոխկրտվի»³⁰: Այդ վեհացական, բառ և հավանաբար, թափանցիկ տողերը դարձյալ գույթակղել էին գուգահեռներ անբկառնելուն հակամետ պոլսահայ ընթերցողին: Շուտով «Միմոսը» հայտնում է, թե «շատեր մեր այս դոժներուն, յուրյանց քմագո համեմատ մեկնություն տալով հետևողներն են, թե «բենչպեր» ըսելով ներսեսյան Գրիգոր էֆենտին ակնարկած եմք»³¹:

Ակնհայտ է. որ այստեղ գոռո ռեննք ծաղոի և երգիծանքի ոչ միայն տարզունակ, այլև, որ ավելի կարևոր է, ավանդույթային ընկալման հետ: Պոլսահայերը, բռնկա մայրաքաղաքում պարբերական մամուլի հայտնությունից առաջ, չափածո եամ արձակ երգիծական նյութեր էին ընթերցում սրը-

26 Շառիվադին, 1876, № 2, էջ 15:

27 Նույն տեղում, № 3, էջ 19—22:

28 Նույն տեղում, 1876, № 8, էջ 58—60, № 10, էջ 75—78, № 11, էջ 86—87:

29 Նույն տեղում, № 13, էջ 98:

30 Միմոս, 1875, № 23, էջ 178:

31 Նույն տեղում, 1875, № 25, էջ 194:

ճարաններում՝ ծաղրուծանակի ենթարկելով այս կամ այն անձնավորությունը։ Դա հասարակական կարծիքի յուրահատուկ դրսևորման ձև էր, որի հիմնով երգիծաթերթերի նյութերից, Շատ հետաքրքիր է, որ լրագրության վերաբերյալ երգիծաթերթերի նյութերից շատ քիչ էր լինում, ինչպիսին «Լրագրի» խմբագիր Ն. Թյուկենտճյանն էր, «Շառիվառին» մեղադրում էր «Անձնականությունների հարվածի» և ընտանեկան ներքին կենացի միջոցով, ոչ թե կոնկրետության մեջ էր, այլ իրականության և բարքերի հիմնով ճանաչողության, որ ի հայտ էր բերում «Շառիվառին»։ Պոստհայ գրողների հաջողված դիմաստվերն է ուրվագծված «Նոր Բոնկած սիրտ մը» երգիծական նամակում, որի հերոսն իր ճոռոմ ոճով և տխմարամտությամբ հիշեցնում է Հ. Պարոնյանի բանաստեղծի («Մեծապատիվ մուրացկաններ») կերպարը⁸²։

1876 թ. ամսականից սկսած նկատելի է դառնում «Շառիվառին» հասարակական ակտիվությունը, որից հետո համարձակորեն պաշտպանեց Հ. Պարոնյանի «Թատրոնին», երբ այն խափանվել էր Ներսես պատրիարքի հայտնի շրջաբերականը քննադատելու համար։ Այդ շրջաբերականով պատրիարքը իր համամտությունն էր հայտնել Բ. Ղուկասյան քաղաքականությանը՝ ի դեպ պատերազմի «Շառիվառին» իրավացիորեն նկատում էր, որ պատրիարքը «Թատրոնին» խափանման թագրերը դրելիս տեղի է տվել «ձախակողմյանների» (այսինքն, «Ղալթիթի» օճախի) կուսակիցների) ճնշմանը։ Պատրիարքի և տպագրական տեսչության պատժիչ արարքը «Շառիվառին» համարում էր բռնություն և հակասահմանադրական ակտ⁸³։ Նույնպիսի համարձակությամբ երգիծաթերթը «Մասիսի» հավելված «Օրաթերթ» «Մասիս» լրագրող թերթից արտատպեց «Անատոլի հայերի վիճակը» հոդվածը, որտեղ պատկերվում էր ժողովրդի իրավագույն և կեղեքված կացությունը։ Մինչդեռ ինքը՝ «Մասիսի» խմբագիր Կ. Ությունյանը, երկյուղելով այդ հոդվածի հետևանքներից, ոչնչացնել էր տվել օրաթերթի գեղեկ չվաճառված համարները։ Իրավացի էր «Շառիվառին», երբ այս պատճառով Ությունյանին մեղադրում էր փոքրոգության մեջ։ Մտահոգված արևմտահայության հարստահարությունների խնդրով, «Շառիվառին» թարգմանաբար տպագրեց Աբդար Սեթի «Հիշատակաբանը», որտեղ հեղինակը այդ գրության վերացումը առնչում էր եվրոպական տերությունների միջամտության հետ⁸⁴։ «Շառիվառին» այսպիսի ընթացիկ փոփոխություններ էր ենթարկում նրա հետագա գոյությունը։ Համեմատելով դեպ, 1877 թ. երգիծաթերթը այլևս չի հրատարակվել։ Պետական մակարդակով ծավալված՝ երգիծական հրատարակությունների և դրանց խմբագիրների հայածանքներն ու հետապնդումները, որ բոլորովին էին 1876 թվականից, արեւ էին իրենց դոռնում։

ИЗ ИСТОРИИ ЗАПАДНОАРМЯНСКОЙ САТИРИЧЕСКОЙ ПЕЧАТИ (50—80-е годы XIX века)

А. А. ХАРАТЯН

Резюме

Наряду с общеизвестными западноармянскими сатирическими изданиями «Мегу», «Татрон», «Луйс», «Цицах» и «Хикар», хотя и скромное, но определенное культурное значение имели также изда-

⁸² Շառիվառի, 1876, № 10, էջ 80։

⁸³ Նույն տեղում, № 21, էջ 164—165։

⁸⁴ Նույն տեղում, № 31, էջ 242։

⁸⁵ Նույն տեղում, № 48, էջ 378—379, № 49, էջ 385—390։

вавшиеся в Стамбуле и Смирне другие юмористические газеты. Юмористическим газетам «Авержаарс», «Димак», «Мамул», «Мимос», «Шаривари» свойственна некоторая общность сатирического жанра, в частности, народный юмор, иносказания, некоторая абстрактность стиля и т. д. В них комизм слова превалирует над комизмом действия, они блещут остроумными суждениями, гротеском, каламбурами и т. п. Эти газеты высмеивали отсталые нравы и обычаи, а также порочные стороны современного быта и семейных отношений.

Указанные газеты в значительной степени стимулировали развитие армянской сатирической прозы и публицистики, а также карикатуры.